



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԿԱ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ՆԱԽԱԳԻԾԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԹԵՄԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵԶ

Հինգշաբթի, 10 Սեպտեմբերի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու Ազգային Վարչութեան հրաւերով, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը, որ նոյն յարկին տակ համախմբեց Ազգ. Առաջնորդարանի մեծ ընտանիքին ներկայացուցիչները: Հրաւիրուած էին հոգեւորականաց դասը, Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամները, եկեղեցիներու հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութիւններու վարչութեանց կազմերը, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինն ու վարժարաններու տնօրէնները եւ վարիչները, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

Ժողովին բացումը կատարելով, Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկաները, որոնց շարքին էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տիար Խաժակ Տիքիճեան: Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ յատուկ հրաւերով ներկայ է նաեւ Բ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան: Ան նշեց, որ այս ժողովը մաս կը կազմէ հերթական հանդիպումներուն այն շարքին, որոնք պարբերաբար կը համախմբեն Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող միաւորները, քննարկելու համար գործակցութեան դաշտերն ու զանոնք զարգացնելու միջոցները, ապա նաեւ անմիջական խնդիրներ: Ան նշեց, որ այսօրուան ժողովը յատկապէս նկատի ունի այն կացութիւնը, որ մեր ժողովուրդի կեանքին մէջ ստեղծուած է վերջին տասը օրերուն, Հայաստան-Թուրքիա համաձայնութեան մը նախագիծին լոյսին տակ:

Առաջնորդ Սրբազանը սեղմ գիծերու մէջ տեղեկութիւններ հաղորդեց Օգոստոսի վերջերուն, Մոնթրեալի մէջ տեղի ունեցած այն ժողովին մասին, որ համախմբած էր Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդները, իբրեւ նախապատրաստութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ Նոյեմբերին նախատեսուած ժողովին: Առաջնորդ Սրբազանը նաեւ անդրադարձաւ մեր վարժարաններուն ու կիրակնօրեայ

դպրոցներու վերամուտին, ու վերջապես, Ազգ. Առաջնորդարանին ու յիշեալ միաւորներու միջեւ գործակցութեան ընթացքէն բխող հարցերու:

Առաջնորդ Սրբազանը ապա հանգամանօրէն կանգ Յայաստան-Թուրքիա համաձայնութեան նախագիծին վրայ, նշելով, որ 31 Օգոստոսին հրապարակուած ծրագիրը թէւ ունին գոհունակութիւն առթող բաժիններ, որովհետեւ յարաբերութեանց բնականոնացումն ու բարի դրացնութեան զարգացումը բաղձալի երեւոյթներ են, սակայն հայութեան ու Թուրքիոյ միջեւ պատմական առկախ հարցերը չեն կրնար անտեսուիլ ու հայութիւնը պետք չէ մնայ իրաւագրկեալի կացութեան մէջ, Տեղասպանութեան ու մեր պատմական հողերուն բռնագրաւումը չեն կրնար մոռացութեան տրուիլ: Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեանը, որպէսզի վարէ ժողովը:

Տոքթ. Կարօ Յակոբեան իր կարգին ողջունեց ժողովականներն ու հիւրերը, նշեց, որ այս երեկոյին քննարկելի գլխաւոր հարցը՝ 31 Օգոստոսին հրապարակուած փրոթոգոլն է ու անոր անբաղձալի հետեւանքները, ապա հրաւիրեց Ազգ. Կեդ. Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեանը, որպէսզի զեկուցէ համաձայնութեան մանրամասնութիւններուն ու հայութեան համար ստեղծուող աննպաստ կացութեան մասին:

Տիար Խ. Տիքիճեան առանձնացուց այն կէտերը, որոնք հայութեան ու մեր հայրենիքին համար անբաղձալի ու անընդունելի հետեւանքներ կը սպառնան, սկսելով այն վտանգէն, որ երկու երկիրներուն միջեւ Կարսի համաձայնագիրին լուռ վերահաստատումով, Տեղասպանութիւնը ենթայանձնախումբի մը քննարկման յանձնելով, հայութիւնը իրողապէս ու իրաւապէս կը զրկուի Տեղասպանութեան հարցի հետապնդման ու Արեւմտեան Հայաստանի հողային իր իրաւունքներէն ու պահանջներէն: Սահմաններու վերաբացման հարցը կը ներկայանայ իբրեւ երկու երկիրներուն կողմէ համահաւասար արարքի մը վերատեսութիւնը, մինչդեռ Թուրքիան է որ միակողմանիօրէն փակած է սահմանները, իսկ այդ քայլին դէմ Հայաստան ու հայութիւնը բազմիցս բողոք ներկայացուցած են միջազգային ընտանիքին: Աւելին, առաջադրուած համաձայնագիրով, Թուրքիա իրողական պայմաններ կը դնէ ու կը դառնայ Արցախի հարցին ի նպաստ Ազրայէճանի լուծման պահանջատերը, ու վերջապէս, Թուրքիա կը ստանձնէ Կովկասի մէջ տագնապներու իրաւարարի դեր, կացութիւն՝ որ միայն ու միայն Թուրքիոյ ի նպաստ զարգացումներու կ'առաջնորդէ: Վերջապէս, տնտեսական բարիքներու խոստումն ալ խաբուսիկ է ու Հայաստանի տնտեսութիւնը ծանր վնասներ կրնայ կրել այս ընթացքէն: Ան իր զեկուցումը եզրափակեց ընդգծելով, որ այս բոլորը վնասաբեր են Հայաստանի ու հայութեան, մանաւանդ մեր Դատը հետապնդող նոր սերունդներու պայքարին, հետեւաբար, անհրաժեշտ նկատեց, որ Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող բոլոր միաւորները իրենց ձայնը միացնեն այս ընթացքին դէմ ծաւալող բողոքի արտայայտութիւններուն, մասնակից ըլլան այս ուղիին կասեցման:

Ներկաներուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու համաձայնագիրին ու անոր կասեցման դէմ որդեգրելի միջոցառումներուն մասին: Յստակ էր, որ նախագիծին բովանդակութիւնն ու անկէ բխող վտանգները ծանօթ էին ներկաներուն: Առաջնորդ Սրբազանը, Տեարք

Խաժակ Տիքիճեան եւ Տիար Աւետիք Իզմիրլեան լուսաբանութիւններ տուին, մեր ազգային շահերուն ու իրաւունքներուն պահպանման ի խնդիր գործնական քայլերը իրենց դիմաց ունին, անմիջականօրէն, հինգ շաբաթներու ժամանակամիջոց մը: Այս շրջանին, բողոքի ու պահանջատիրութեան իրերայաջորդ հանգրուաններով պիտի զարգանան հայութեան քայլերը, որպէսզի այս համաձայնագիրը Հայաստանի Ազգային Ժողովի օրակարգին մէջ չմտնէ իսկ, այլ իշխանութիւնները համոզուին, թէ պետք է ետ կենալ այս պատմական սխալէն: Հաղորդուեցաւ, որ այս նպատակին համար, հայկական կուսակցութիւններն ու միութիւններ միաձայն են, ստեղծուած է գործակցական մթնոլորտ, ու իբրեւ առաջին ուշագրաւ արտայայտութիւն, 27 Սեպտեմբերին պիտի կազմակերպուի ժողովրդային հաւաք մը, որուն մանրամասնութիւնները շուտով պիտի հրապարակուին: Նախատեսուած են նաեւ բողոքի այլ արտայայտութիւններ:

Խօսք արտասանելու հրաւիրուեցաւ Տիար Աւետիք Իզմիրլեան: Ան շնորհակալութիւն յայտնեց որ հրաւիրուած է այս հաւաքին, սեղմ գիծերու մէջ ներկայացուց այն աշխատանքները, զորս կը հետապնդէ Հ.Յ.Դ. Կեդ. կոմիտէն՝ 31 Օգոստոսէն ի վեր իր բաց նիստերով, հանդիպումներ ունենալով հայկական կուսակցութեանց, միութեանց ու խմբաւորումներու, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու պետական որոշ շրջանակներու հետ: Ան շեշտեց, որ հայութիւնը այսօր կը գտնուի պատմական վտանգաւոր անկիւնադարձի մը վրայ, մեր ազգային ընդհանուր շահերն ու պահանջներն են որ հարցականի տակ կը դրուին, Հայաստանի իշխանութիւններուն սխալ ընթացքը կը սպառնայ փոշիացնել մեր իրաւունքներն ու անոնց իրագործման նպատակով տարուած պայքարը, աշխատանքները: Կը գտնուինք քաղաքական պատերազմի մը մէջ, շարունակեց ան, միաժամանակ վստահութիւն յայտնելով, որ մեր ժողովուրդը, իրազէկ ըլլալով իր իրաւունքներուն ու ստեղծուած կացութեան լրջութեան, միակամ ու միասնական կերպով պիտի կասեցնէ այս աննպաստ ընթացքը: Ան կոչ ուղղեց, որ ներկաները իրենց շրջապատին ծանօթացնեն դառն իրականութիւնները ու զանոնք առաջնորդեն միանալու այս պայքարին:

Ժողովը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին պահպանիչով: Հրաժեշտէն առաջ, Առաջնորդ Սրբազանը ընդգծեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ի՛նք եւս մէկ զոհն է Եղեռնին ու տազնապը կը դիմակալէ այս մօտեցումով:

WESTERN PRELACY HOSTS A DISCUSSION ON THE ARMENIA-TURKEY PROTOCOLS

On the evening of Thursday, September 10th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, invited representatives of the Western Prelacy to the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for a discussion on the recently unveiled Armenia-Turkey protocols. Among those in attendance were clergy, delegates, Boards of

Trustees and Ladies Auxiliary members, Board of Regents members, schools' principals and directors, and the Prelacy Ladies Auxiliary.

The meeting opened with the Prelate welcoming the guests, among them member of the Catholicosate Central Committee Mr. Khajag Dikjian and ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian.

The Prelate first touched upon general issues regarding the endeavors of the Prelacy including the meeting that took place at the end of August in Montreal between the three North American Prelates to prepare for the General Assembly which will be held in November at the Catholicosate in Antelias, and the start of the new academic year at Prelacy Schools.

Speaking on the protocols between Armenia and Turkey that came to light on August 31st, the Prelate stated that although the protocols in theory outline some positive changes like the bilateral normalization of relations, ultimately the rights of the Armenian people will be compromised. The Prelate then invited Executive Council Chair Dr. Garo Agopian to moderate the discussion.

Dr. Agopian welcomed the guests then invited Mr. Dikjian to speak on the details of the protocols.

Mr. Dikjian focused on the points of the protocol that will compromise the rights of the Armenian people and touched upon statements such as the opening of the borders will have a positive impact on Armenia's economy while the move can on the contrary have a negative impact. In conclusion, Mr. Dikjian asserted that overall, the protocols will be, at the least, disadvantageous for Armenia, thus, it is crucial that all those present unite their voices and speak out against it.

During the question and answer session, the Prelate, Mr. Dikjian, and Mr. Izmirlian gave further clarifications on the details of the protocols and the steps that must be taken in the next five weeks to ensure that the issue does not reach to the point of serious consideration by the Armenian government. In this regards, a community gathering supported by all local political parties and organizations will take place on Sunday, September 27th, the details of which will be released soon.

In his address, Mr. Izmirlian spoke of the steps the ARF Central Committee has taken since the announcement of the protocols, including meetings and discussion not only with members of the Armenian community but U.S. government officials as well. Mr. Izmirlian stated that the Armenian nation is at a dangerous crossroads where our national rights are being compromised and which can render useless all the work that has been carried out thus far for our cause. Thus, he also stressed the importance of uniting and joining efforts to speak out against the protocols and the consequences it will have on the Armenian nation.

The meeting concluded with the benediction by the Prelate.